ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 52

16/11/2018

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի , ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով , ՀՀ Կառավարության 23.06.2015թ. թիվ 828-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով Աստղաձոր համայնքի բնակիչ Ենոք Գնունյանի 05.10.2018թ. դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Աստղաձոր համայնքի բնակիչ Ենոք Մելիքի Գնունյանին սեփականություն իրավունքով պատկանող գ. Աստղաձոր Արցախյան ազատամարտիկների փողոց 24/1 հասցեում գտնվող 05-013-044-023 ծածկագրով 0.0226 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակ կառուցապատման է: Առաջարկվում է դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ նշված հողամասը բնակ կառուցապատման հողերի կազմից փոխադրել հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակության , նշված տարածքում հետագայում հասարակական սպասարկում իրականացնելու նպատակով:

2. Առաջարկել Աստղաձոր համայնքի ղեկավարին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ գործընթացը կազմակերպելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

3. ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

4. ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

6. ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ